

## Հաշվետվություն

Արարատի մարզի Մրգավետ համայնքի ղեկավարի 2015թ-ի

երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների

10.12.2015թ. Մրգավետ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը վարում էր համայնքի ղեկավար Լ. Աբրահամյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Ն. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին գյուղապետարանի աշխատակազմը, դպրոցի տնօրեն՝ Վ. Զոհրաբյանը, մանկապարտեզի վարիչ՝ Ժ. Մնացականյանը, հայփոստի աշխատակիցը, բուժ. ամբուլատորիայի աշխատակցուհին

Լսեցին- Մրգավետ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2015թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ երկրորդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Գյուղապետարանում բնակչությունից ստացվել է 85 դիմումներ, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստի ժամանակ, և տրվել են համապատասխան լուծումներ:

2015թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ գյուղապետարանը բնակիչներին տվել է 420 տեղեկանք, ստացել 110 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

2015թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սանամաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները և փողոցները: Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասի չափագրման, սահմանների ճշգրտման, հողամասերի փոփոխման և ձևակերպման աշխատանքները:

Նշվեց անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած անձանց անհատույց հատկացումներ կատարելու մասին: Համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրվել է 2.669.000 (երկու միլիոն վեց հարյուր վաթսուհինը հազար) դրամ, հարազատին կորցրած անձանց տրվել է 100.000 (մեկ հարյուր հազար) դրամ ֆինանսական աջակցում, աղբահանության աշխատանքների կազմակերպման հարցում հատկացվել է 910.000 (ինը հարյուր տաս հազար) դրամ:

Կառավարության կողմից մեր համայնքին անհատույց հատկացված ազոտական պարարտանյութը և աշնանային սերմնացու ցորենը ամբողջությամբ ստացել և բաշխել ենք բնակիչներին:

Դեկտեմբերի 10-ի դրությամբ եկամտային մասով կազմում է 41.578.000 (քառասունմեկ միլիոն հինգ հարյուր յոթանասուն ութ հազար) դրամ, տարեկանի կտրվածքով կատարվել է 91%:

2015թ երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների

1.Հողի հարկ – 4.879.000

2.Գույքահարկ –3.467.000

3.Տեղական տուրքեր –387.000


Դեկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 31-ը նախատեսվում է հավաքել

1.Հողի հարկ – 430.000

2.Գույքահարկ –516.000

3.Տեղական տուրքեր –0

Համայնքի ղեկավար



Աբրահամյան